

**Արամայիս Գագիկի Ասատրյան**

Ծնվել է 17.12.1990թ.-ին, Թալին քաղաքում:

2007թ.-ին ավարտել է Թալին քաղաքի բնագիտամաթեմատիկական թեքումով հատուկ քոլեջը:

2014թ.-ին ավարտել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2019թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան:

08.07.2014-30.06.2016թթ. աշխատել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

01.08.2016-10.03.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

10.03.2017թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2011-2013թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:



**Տարոն Ռոբերտի Թադևոսյան**

Ծնվել է 24.03.1989թ.-ին, Սպիտակ քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Լոռու մարզի Արևաշող գյուղի միջնակարգ դպրոցը:

2010թ.-ին ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2015թ.-ին՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մագիստրատուրան:

12.08.2010-02.11.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

02.11.2012-21.06.2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

21.06.2013-19.09.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքում՝ որպես ավագ քննիչ:

19.09.2014-11.12.2017թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

11.12.2017-01.09.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ:

01.09.2020թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում՝ որպես պետ:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:



**Արամ Ավետիքի Մարտիրոսյան**

Ծնվել է 09.10.1987թ.-ին, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում:

2004թ.-ին ավարտել է Սևան քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցը:

2004-2009թթ. սովորել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում:

12.08.2009-05.07.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ:

12.08.2014-09.10.2014թթ. աշխատել է ՀՀ ՊՆ 55595 զորամասում՝ որպես քննիչ:

09.10.2014-05.10.2017թթ. աշխատել է ՀՀ ՔԿ ԶՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ:

11.10.2017-23.11.2020թթ. աշխատել է Սևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազ:

23.11.2020թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:



**Կարեն Արմենակի Ալավերդյան**

Ծնվել է 08.03.1988թ.-ին, Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

2005թ.-ին ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2009թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2011թ.-ին՝ մագիստրատուրան:

02.10.2009-27.05.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն հայանքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

22.10.2013-08.10.2014թթ. աշխատել է ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

08.10.2014-18.11.2015թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

18.11.2015-14.08.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

14.08.2019թ.-ից առ այսօր աշխատում է որպես ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետի տեղակալ՝ արդարադատության երրորդ դասի խորհրդական:

08.10.2017թ.-ին պարգևատրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պատվոգրով:

08.10.2018թ.-ին պարգրևատրվել է «Անբասիր ծառայության համար IV աստիճանի» մեդալով:

2016թ.-ին շնորհվել է «Արդարադատության կապիտանի» արտահերթ կոչում:

2018թ.-ից դասավանդում է «Եվրոպական համալսարան» հիմադրամի Կապանի մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետում:

ՀՀ փաստաբանների պալատի անդամ է (փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է):

Ամուսնացած չէ:



**Հայկ Արշակի Պետրոսյան**

Ծնվել է 27.08.1982թ.-ին, Կոտայքի մարզի Զովունի գյուղում:

1999թ.-ին ավարտել է «Ռ. Բաղդասարյանի անվան» միջնակարգ դպրոցը՝ «Ոսկե մեդալով»:

2003թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2005թ.-ին՝ մագիստրատուրան:

2005թ. կնքել է պայմանագիր ՀՀ Պաշտպանության նախարարության հետ և ծառայության անցել ՀՀ Զինված ուժերում, որպես 16396 զորամասի հրամանատարի սոցիալ-իրավական գծով օգնական, իսկ 2007թվականից թիվ 27527 զորամասում՝ որպես իրավաբան:

23.04.2009-17.01.2012թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

17.01.2012-16.01.2014թթ. աշխատել է որպես Սյունիքի մարզի դատախազի տեղակալ:

16.01.2014-09.04.2018թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

09.04.2018-26.09.2019թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

26.09.2019թ.-ից մինչ օրս աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

Ամուսնացած է:



**Մարտին Նապոլեոնի Արզումանյան**

Ծնվել է 05.02.1989թ.-ին, Երևան քաղաքում:

2005թ.-ին ավարտել է Երևանի Լև Տոլստոյի անվան թիվ 128 միջնակարգ դպրոցը:

2010թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2012թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2014թ.-ին ավարտել է Արդարադատության ակադեմիայի Դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:

2020թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

03.02.2011-08.12.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես գործավար:

02.05.2012-28.11.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղարի պարտականությունների ժամանակավոր կատարող:

20.02.2015-23.01.2017թթ. աշխատել է Արագածոտնի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

23.01.2017-04.03.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես դատախազ:

04.03.2019թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

13.07.2018 թվականին ՀՀ դատախազության 100-ամյակի առթիվ շնորհվել է արտահերթ դասային աստիճան:

Տիրապետում է հայերեն (մայրենի), ռուսերեն (գերազանց) և անգլերեն (լավ) լեզուներին, MS Word, Excel, Power Point, Access համակարգչային ծրագրերին:

Ամուսնացած է:

Անկուսակցական է:



**Էդուարդ Ստեփանի Մկրտչյան**

Ծնվել է 12.01.1990թ.-ին, Երևան քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Եղիշե Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը:

2010թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020թ.-ին՝ մագիստրատուրան:

04.02.2011-26.12.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավարի ժամանակավոր պաշտոնակատար:

26.12.2011-21.11.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

21.11.2012-02.12.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.12.2013-17.02.2015թթ. աշխատել է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

17.02.2015թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Դատական ծառայության երկրորդ դասի խորհրդական է:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



**Մուշեղ Արթուրի Արամյան**

Ծնվել է 15.01.1991թ.-ին, Երևան քաղաքում:

1997-2001թթ. սովորել է ք. Չարենցավանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, 2001-2006թթ.՝ Երևանի Րաֆֆու անվան թիվ 36 միջնակարգ դպրոցում, 2006թ.՝ թիվ 189 միջնակարգ դպրոցում (էքստեռն տարբերակով):

2006-2012թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2009-2011թթ. պարտադիր զինվորական ծառայութուն է անցել ՀՀ ԱԱԾ սահմանպահ զորքերում:

2012-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2013թ.-ին սովորել է «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում:

2019թ.-ին սովորել է ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամում:

16.01.2014-13.05.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

13.05.2016-13.11.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

13.11.2019թ.-ից առ այսօր աշխատում է որպես Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ:

04.09.2018թ.-ից հանդիսանում է Մովսես Խորենացու անվան համալսարանի Քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, 02.09.2019թ.-ից՝ ՀԱՊՀ Հասարակագիտության ամբիոնի դասախոս, 2020-2021թթ. ուսումնական տարում հանդիսացել է ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ-ի ՀՀ քրեական իրավունքի դասախոս:

ՀՀ գլխավոր դատախազի 20.09.2016թ. թիվ 249-Ա հրամանով պարգևատրվել է «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով, ՀՀ գլխավոր դատախազի 08.05.2018թ. թիվ 83-Ա հրամանով պարգևատրվել է «Պարտականությունների գերազանց կատարման համար» դրամական պարգևով, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 25.06.2019թ. թիվ 54-Ա հրամանով պարգևատրվել է «Շնորհակալագրով», ՀՀ գլխավոր դատախազի 30.06.2020թ. թիվ 186-Ա հրամանով շնորհվել է պաշտոնական պարտականությունների գերազանց կատարման համար արտահերթ դասային աստիճան:



**Շիրակ Գագիկի Հարությունյան**

Ծնվել է 28.01.1987թ.-ին, Գյումրի քաղաքում:

2008թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) բակալավրիատը՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

2010թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) մագիստրատուրան՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

2014թթ. ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ. ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

30.06.2007-01.11.2010թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի երաժշտական դպրոցում՝ որպես հաշվապահ:

15.11.2010-23.11.2010թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես գործավար:

23.11.2010-11.08.2015թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատարանի աշխատակազմի գրասենյակի մասնագետ:

11.08.2015-20.07.2018թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Դատական ծառայության երկրորդ դասի խորհրդական է:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



**Ժորա Արմենի Չիչոյան**

Ծնվել է 27.02.1995թ.-ին, Գավառ քաղաքում:

2001-2012թթ. սովորել է Գավառի ավագ դպրոցում:

2012-2016թթ. սովորել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում՝ իրավագիտություն մասնագիտությամբ, որն ավարտել է գերազանցությամբ:

2016-2018թթ. սովորել է Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2017թ. սովորել է ՀՀ արդարադատության ակադեմիայում՝ որպես դատախազի թեկնածու:

13.02.2017-28.02.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

28.02.2020-15.03.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

15.03.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում՝ որպես դատախազ:

01.07.2019թ. ՀՀ գլխավոր դատախազի թիվ 118Ա հրամանով պարգևատրվել է շնորհակալագրով և «Դատախազության կրծքանշան»-ով:

31.07.2020թ. ՀՀ ոստիկանության պետի թիվ 2200Ա հրամանով պարգևատրվել է «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

25.09.2020թ. ՀՀ գլխավոր դատախազի թիվ 330Ա հրամանով պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակ» մեդալով:

Երկրորդ դասի խորհրդական է:

Տիրապետում է ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներին:

Ամուսնացած է:



**Ժաննա Արմենի Կոծինյան**

Ծնվել է 29.10.1986թ.-ին:

2002թ. ավարտել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցը:

2008թ. ավարտել է ՀՀ «Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ. ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

28.09.2009-15.11.2010թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

11.03.2011-18.12.2012թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

22.03.2013-03.12.2013թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

03.12.2013-26.01.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

26.01.2016-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Շնորհվել է ՀՀ Դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Ամուսնացած չէ:



**Սարգիս Մելսիկի Հովհաննիսյան**

Ծնվել է 08.01.1989թ.-ին, Երևան քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Երևանի Հակոբ Օշականի անվան թիվ 172 միջնակարգ դպրոցը:

2006-2007թթ. սովորել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կնքված միջպետական պայմանագրի շրջանակներում Մոսկվա քաղաքի Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի (Российский государственный социальный университет) իրավագիտության ֆակուլտետում:

2007թ.-ին տեղափոխվել և մինչև 2010թ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2010-2012թթ. անցել է ժամկետային զինվորական ծառայության ՀՀ ՊՆ թիվ 60925 և ԼՂՀ ՊԲ Հադրութի շրջանի թիվ 38401 զորամասերում (ԼՂՀ 1-ին Պաշտպանական շրջան):

Ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԼՂՀ ՊԲ հրամանատարի կողմից բարեխիղճ ծառայության, ենթակաների ուսուցման և դաստիարակության գործում ունեցած հաջողությունների համար 2011թ.-ին պարգևատրվել է պատվոգրով, իսկ ԼՂՀ ՊԲ Հադրութի զորամասի հրամանատարի 29.08.2011թ. հրամանով պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» կրծքանշանով:

2015թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

17.01.2013-18.07.2013թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետության գույքային շահերի պաշտպանության և գանձումների սպասարկման բաժնում՝ որպես փորձագետ:

13.09.2013-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ Դատական դեպարտապենտ ՊԿՀ կենտրոնական մարմնում. 13.09.2013-20.01.2014թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության կրտսեր մասնագետ, 20.01.2014-09.04.2015թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության մասնագետ, 09.04.2015-05.10.2015թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության ավագ մասնագետ, 05.10.2015-01.11.2018թթ.՝ որպես Իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի ավագ մասնագետ:

01.11.2018-20.03.2019թթ. աշխատել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմում՝ Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնի պետ:

26.06.2019-30.12.2019թթ. աշխատել է Վարչապետի աշխատակազմի «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպությում՝ որպես իրավաբան:

28.04.2020թ.-ից առ այսօր աշխատում է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմում՝ Դատական դեպարտամենտի Իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության Իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժնի պետ:

Ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար 28.12.2017թ.-ին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

Արցախյան երկրորդ պատերազմի մասնակից է՝ 27.09.2020թ.-ից կամավորագրվել և մասնակցել է Մատաղիսի և Թալիշի (ՊԲ 6-րդ պաշտպանական շրջան), այնուհետև՝ Մարտակետի (ՊԲ 5-րդ պաշտպանական շրջան) պաշտպանության համար մղված մարտական գործողություններին:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած չէ:



**Ռոման Վազգենի Սմբատյան**

Ծնվել է 26.08.1984թ.-ին, Երևան քաղաքում:

2001թ. ավարտել է Երևանի թիվ 51 միջնակարգ դպրոցը:

2001-2005թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2005-2007թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

08.01.2008-04.08.2009թթ. աշխատել է «Ռ. Հ. Փրինթ Հոմ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

05.08.2009-28.12.2010թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության վարչության պետաիրավական բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

28.12.2010-15.03.2011թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության ֆինանսատնտեսական օրենսդրության փորձաքննության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

15.03.2011-16.05.2011թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության օրենքով նախատեսված առանձին ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության տեսչության վերահսկողության բաժնում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

16.05.2011-15.11.2011թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության ֆինանսատնտեսական օրենսդրության փորձաքննության բաժնում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

21.11.2011-30.12.2011թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի տնտեսական բաժնում՝ որպես տեսուչ:

30.12.2011-26.11.2012թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության մասնավոր իրավունքի բնագավառի իրավական ակտերի փորձաքննության բաժնում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

26.11.2012-16.05.2014թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական ծառայությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2011-2012թթ. դասախոսել է «Մխիթար Գոշ» համալսարանում (քրեակատարողական իրավունք), 2013-2014թթ. դասախոսել է «Հայբուսակ» համալսարանում (քրեական իրավունք):

16.05.2014-2019թթ. աշխատել է ՀՀ դատախազության քարտուղարության /վարչության/ պետի պաշտոնում:

2015-2017թթ. պետական ծառայողների վերապատրաստումների ընթացքում դասախոսել է «ՀՀ Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ում:

26.11.2019թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակում՝ կրթության, առողջապահության և աշխատանքի ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ:

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 02.18.2019թ. թիվ 3-Ա որոշման համաձայն ընդգրկված է եղել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամների թեկնածուների ցանկում:

ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. հրամանով ստացել է քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ արդարադատության նախարարի 2013թ. հրամանով բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել է հուշանվերով:

ՀՀ գլխավոր դատախազի 2014թ. հրամանով ստացել է պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. հրամանով պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100 ամյակ» հոբելյանական մեդալով:

Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:



**Սամվել Սեյրանի Յուզբաշյան**

Ծնվել է 02.10.1989թ.-ին, Երևան քաղաքում:

2009թ. ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ գերազանցությամբ:

2011թ. ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ գերազանցությամբ:

2011-2014թթ. սովորել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրայում:

01.07.2014թ.-ին պաշտպանել է «Խարդախության համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրները (իրավա-համեմատական վերլուծություն)» վերտառությամբ թեմայով թեկնածուական ատենախոսություն, որի համար շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2013թ.-ին հանդիսացել է Դատախազության դպրոցի ունկնդիր:

2009-2012թթ. աշխատել է Ազգային ժողովում՝ որպես պատգամավորի վճարովի հիմունքներով օգնական (համատեղությամբ):

2011թ.-ին աշխատել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի իրավաբանական ծառայությունում՝ որպես փորձնակ:

2011-2012թթ. աշխատել է ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչությունում՝ որպես պետի խորհրդական:

2012-2013թթ. աշխատել է ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ում՝ որպես տնօրենի խորհրդական, այնուհետև՝ գույքագրման և գնահատման բաժնի պետի տեղակալ:

2013-2014թթ. աշխատել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչությունում՝ որպես մասնագետ:

11.02.2014-23.05.2017թթ. աշխատել է Երևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազ:

23.05.2017-09.04.2018թթ. աշխատել է ՀՀ Զինվորական կենտրոնական դատախազության ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում քննվող գործերի բաժնում՝ որպես դատախազ:

09.04.2018-24.09.2018թթ. աշխատել է ՀՀ Զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության բաժնում՝ որպես դատախազ:

24.09.2018թ.-ից առ այսօր՝ ՀՀ Զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության բաժնում՝ որպես ավագ դատախազ:

2015թ.-ից առ այսօր դասավանդում է «Հայաստանի ֆրանսիական համալսարան» հիմնադրամում՝ որպես Քրեական իրավունքի դասախոս:

2016թ.-ից առ այսօր դասավանդում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

2017թ.-ից առ այսօր դասավանդում է Արդարադատության ակադեմիայում:

Հեղինակ է 13 գիտական աշխատանքի:

Պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով (2015թ.), ՌԴ Դաշնային ժողովի պետական դումայի նախագահի «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն» պատվոգրով (2015թ.), ԼՂՀ գլխավոր դատախազի «Օրինականության ու իրավակարգի ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության մարմինների հետ սերտ համագործակցության և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ» շնորհակալագրով (2016թ.), ՀՀ գլխավոր դատախազի հրամանով արտահերթ դասային աստիճանի շնորհման (2018թ.), ՀՀ գլխավոր դատախազի հրամանով «Պաշտոնական պարտականությունները գերազանց կատարելու համար և դատախազության աշխատողի օրվա առթիվ» շնորհակալագրով և «ՀՀ դատախազության կրծքանշանով» (2019թ.), ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով «Համագործակցության համար մեդալով» (2020թ.);

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



**Արշակ Ռազմիկի Հարությունյան**

Ծնվել է 01.10.1988թ.-ին, Երևան քաղաքում:

2005թ.-ին ավարտել է Երևանի Չարենցի անվան թիվ 67 դպրոցը:

2005-2010թթ. սովորել է Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարան»-ի իրավագիտության ֆակուլտետում:

2010-2013թթ. հանդիսացել է Ռուսաստանի Դաշնության «Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարան»-ի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ:

2013թ.-ին պաշտպանել է թեկնածուական աշխատանքը Ռուսաստանի Դաշնության Նախագահին կից պետական ծառայության և ժողովրդական տնտեսության Ռուսաստանի ակադեմիայում:

05.05.2014-23.07.2015թթ. համատեղության կարգով աշխատել է Երևանի Մենեջմենթի համալսարանում՝ որպես դասախոս:

22.07.2015-22.07.2017թթ. աշխատել է Ազգային ժողովի պատգամավորի օգնական:

01.09.2015թ.-ից մինչ օրս համատեղության կարգով աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ որպես դասախոս:

01.09.2015-31.08.2017թթ. համատեղության կարգով աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ որպես դասախոս:

2016-2017թթ. համատեղության կարգով աշխատել է Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղում՝ որպես դասախոս:

01.09.2017-17.02.2020թթ. աշխատել է Արդարադատության նախարության վերահսկողական ծառայության հինգերորդ բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

17.02.2020թ.-ից առ այսօր աշխատում է Արդարադատության նախարության վերահսկողական ծառայության հինգերորդ բաժնում՝ որպես գլխավոր իրավաբան:

2020թ.-ի ապրիլից մինչ օրս համատեղության կարգով աշխատում է ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում՝ որպես դասախոս:

Զինապարտ է՝ հաշվառված է պահեստազորում Հայաստանի Հանրապետության զինապարտության մասին օրենքի 12-րդ հոդվածի (ե) կետի համաձայն, զինվորական կոչումը՝ շարքային:

Հեղինակ է տասնութ գիտական աշխատանքների:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



**Հայկ Արմենի Հարությունյան**

Ծնվել է 27.01.1989թ.-ին, Արտաշատ քաղաքում:

2005թ.-ին ավարտել է Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոցը:

2009թ. ավարտել է «Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարան» (РУДН) Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական հիմնարկի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2011թ. ավարտել է «Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարան» (РУДН) Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական հիմնարկի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2011-2014թթ. հանդիսացել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ, պաշտպանել է «Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը որպես քրեական իրավունքի ինստիտուտ» թեմայով ատենախոսությունը և 2014թ.-ին ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2009-2014թթ. աշխատել է ՀՀ Դատական դեպարտամենի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես գործավար, ապա՝ կրտսեր մասնագետ, մասնագետ, այնուհետև՝ ավագ մասնագետ: Նույն ժամանակահատվածում ստացել է ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2014-2015թթ. աշխատել է ՀՀ Արդարադատության նախարարությունում՝ որպես նախարարի խորհրդական, ապա՝ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդատու:

2015-2016թթ.՝ ՀՀ Արդարադատության նախարարությունում՝ որպես Օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության քրեաիրավական, սահմանադրական և վարչական օրենսդրության բաժնի պետ:

18.10.2016-06.06.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում՝ որպես դատախազ:

06.06.2018-28.03.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

28.03.2019-24.11.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

24.11.2020թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

01.09.2014թ.-ից առ այսօր դասախոսում է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի (ՀՖՀՀ)՝ իրավունքի ամբիոնում (դասընթաց՝ «Քրեական իրավունք»):

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակի» հոբելյանական մեդալով, «Համագործակցության համար» մեդալով և «ՀՀ դատախազություն» կրծքանշանով:

Հեղինակ է 14 գիտական աշխատանքների:

Տիրապետում է հայերեն (մայրենի), ռուսերեն (գերազանց) և անգլերեն (լավ) լեզուներին, MS Word, Excel, Power Point, Access համակարգչային ծրագրերին:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Անկուսակցական է: